ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Ազգային ժողովի 2026 թ. հունիսի 7-ի ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերի բնական ռեսուրսների և բնապահպանական բաղադրիչի վերաբերյալ

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Ազգային ժողովի 2026 թ. հունիսի 7-ի ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերի բնական ռեսուրսների և բնապահպանական բաղադրիչի վերաբերյալ

Սույն փաստաթուղթն ամփոփ ներկայացնում է ՀՀ Ազգային ժողովի 2026 թ. հունիսի 7-ի հերթական ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերում բնական ռեսուրսների կառավարման, օգտագործման և բնապահպանական հարցերին առնչվող խոստումները:

Ուսումնասիրության հիմքում ընկած են ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում օրենքով սահմանված կարգով հրապարակված նախընտրական ծրագրերը:

2026 մայիսի 24-ի դրությամբ պարզվել է, որ 19 քաղաքական ուժերից միայն 10-ն ունեն նախընտրական ծրագիր: Դրանցից 9-ն են անդրադարձել բնական ռեսուրսների կառավարման, օգտագործման և բնապահպանությանն առնչվող հարցերին:

Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների կառավարման վերաբերյալ քաղաքական ուժերի մոտեցումները զգալիորեն տարբերվում են: Որոշ ծրագրերում բնապահպանությունը դիտարկվում է որպես ազգային անվտանգության, հանրային առողջության և կայուն զարգացման կարևոր բաղադրիչ՝ ներառելով կենսաբազմազանության, անտառների, ջրային ռեսուրսների պահպանության, թափոնների կառավարման և շրջակա միջավայրի մոնիթորինգի վերաբերյալ համապարփակ միջոցառումներ: Մի շարք քաղաքական ուժեր կարևորում են նաև վերականգնվող էներգետիկայի զարգացումը, էներգախնայողությունը և ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը: Միաժամանակ, մի շարք ծրագրերում բնական ռեսուրսների, մասնավորապես՝ հանքարդյունաբերության և էներգետիկայի ոլորտները ներկայացվում են հիմնականում տնտեսական զարգացման, արդյունաբերական աճի և էներգետիկ ինքնաբավության համատեքստում՝ առանց շրջակա միջավայրի պահպանության կամ բնական ռեսուրսների կայուն կառավարման վերաբերյալ մանրամասն հանձնառությունների: Որոշ քաղաքական ուժեր, ընդհակառակը, հանդես են գալիս հանքարդյունաբերության սահմանափակման, խիստ բնապահպանական չափանիշների կիրառման և բնական միջավայրի պահպանության օգտին:

Իրենց ծրագրերում բնապահպանությանն առնչվող դրույթներ ներառել են հետևյալ 9 քաղաքական ուժերը.

- «Ուժեղ Հայաստան» դաշինք, N 3
- «Միասնության թևեր» կուսակցություն, N 6
- «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն, N 7

- «Ազգային-ժողովրդավարական բևեռ» համահայկական կուսակցություն, N 8
- «Հայ ազգային կոնգրես» կուսակցություն, N 10
- «Հանրապետություն» կուսակցություն, N 11
- «Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն, N 14
- «Դեմոկրատիա Օրենք Կարգապահություն» կուսակցություն, N 15
- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն, N 16

«Ուժեղ Հայաստան» դաշինք (N 3)

Ծրագրում (էջեր 29-30) բնապահպանական բաղադրիչը հիմնականում արտահայտվում է էներգետիկ ռեսուրսների զարգացման և կառավարման համատեքստում: Մասնավորապես, նախատեսվում է զարգացնել արևային և այլ վերականգնվող էներգիայի աղբյուրները, խթանել էներգախնայողության գործունեությունը, զարգացնել հիդրոկուտակման հնարավորությունները և արդիականացնել էլեկտրական ցանցերը:

«Միասնության թևեր» կուսակցություն (N 6)

Ծրագիրը (էջեր 44-46) շրջակա միջավայրի պահպանությունը դիտարկում է որպես ազգային անվտանգության, հանրային առողջության և տնտեսական կայունության հիմնասյուն: Նախատեսվում է վերանայել հանքարդյունաբերության ոլորտը՝ ներդնելով խիստ բնապահպանական ստանդարտներ և հանրային վերահսկողություն, կիրառել «աղտոտողը վճարում է» սկզբունքը և ապահովել շրջակա միջավայրի վերականգնման մեխանիզմներ: Ծրագիրը նաև նախատեսում է ջրային ռեսուրսների պաշտպանության և արդյունավետ կառավարման համակարգերի ներդրում, օդի աղտոտվածության նվազեցում, թափոնների կառավարման և վերամշակման համակարգի զարգացում, կենսաբազմազանության և անտառների պահպանություն, ինչպես նաև կանաչ տեխնոլոգիաների և վերականգնվող էներգիայի խթանում: Բնապահպանական քաղաքականության իրականացման շրջանակում առանձնահատուկ ընդգծվում է հանրային վերահսկողության դերը, մասնավորապես՝ հանքարդյունաբերության ոլորտում:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն (N 7)

Ծրագիրը (էջեր 6, 7) նախատեսում է ջրային տնտեսության կառավարման համակարգի արմատական վերափոխում՝ բացառելով միջնորդ օղակները, նվազեցնելով ոռոգման ջրի ինքնարժեքը և ամրապնդելով ջրամատակարարողների ու ջրօգտագործողների միջև վստահությունը: Միաժամանակ, ծրագիրը կարևորում է էներգետիկ և արդյունաբերական ինքնաբավության ապահովումը՝ նոր ժամանակակից ատոմակայանի կառուցման, պղնձաձուլարանների ստեղծման, մետաղական հումքի վերամշակման արդիականացման, գլոբալ տվյալների կենտրոնների, ինչպես նաև ռադիոդեղագործական և միջուկային բժշկության կենտրոնի հիմնման միջոցով:

«Ազգային-ժողովրդավարական բևեռ» համահայկական կուսակցություն (N 8)

Ծրագրում (էջեր 3-4) բնապահպանական բաղադրիչը հիմնականում արտահայտվում է ջրային ու էներգետիկ ռեսուրսների կառավարման համատեքստում: Մասնավորապես, նախատեսվում է ջրային և հիդրոէներգետիկ ենթակառուցվածքների զարգացում, ինչպես նաև վերականգնվող էներգետիկայի խթանում: Նախատեսվում է նաև նոր ատոմակայանի կառուցում և էներգետիկ անկախության ապահովում:

«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն (N 10)

Ծրագրում (էջեր 24-25) բնապահպանությունը դիտարկվում է որպես տնտեսական զարգացման հիմնարար ուղղություն՝ շեշտադրելով մաքուր բնության պահպանման և հանրային առողջության առաջնահերթությունը: Ծրագրով նախատեսվում է հրաժարվել նոր հանքարդյունաբերության զարգացումից՝ սահմանափակվելով գործող ավանդական հանքերի շահագործմամբ, ինչպես նաև կիրառել խիստ էկոլոգիական չափանիշներ գործող հանքարդյունաբերական տնտեսվարողների նկատմամբ: Նախատեսվում է փակել և կոնսերվացնել Երևանի օդը աղտոտող հանքերը, խրախուսել էկոգյուղատնտեսությունն ու էկոտուրիզմը, վերացնել աղբավայրերը և կառուցել աղբամշակման գործարաններ: Ծրագիրը նաև նախատեսում է խստացնել քաղաքաշինական նորմերը՝ մասնավորապես պարկային գոտիների ստեղծման պարտադրանքով:

«Հանրապետություն» կուսակցություն (N 11)

Ծրագիրը (էջեր 1, 3) տնտեսության զարգացման և անվտանգության ապահովման համատեքստում նախատեսում է հանքահումքային ռեսուրսների լիարժեք և արդյունավետ օգտագործում, նոր ատոմակայանների կառուցում, ինչպես նաև ջրային ռեսուրսների կառավարման բարելավում՝ նոր ջրամբարների կառուցման և ջրի կուտակման ծավալների ավելացման միջոցով: Ծրագիրը նախատեսում է վերակազմավորել կառավարության կառուցվածքը՝ ստեղծելով Գյուղատնտեսության և ջրային ռեսուրսների, ինչպես նաև Ատոմային էներգիայի և էներգետիկայի նախարարություններ:

«Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն (N 14)

Ծրագրում (էջ 12) ընդերքի աստիճանական ազգայնացումը ներկայացվում է որպես առաջնահերթություն: Սակայն տվյալ առաջնահերթության համար կոնկրետ հանձնառություններ ծրագրում ներկայացված չեն:

«Դեմոկրատիա Օրենք Կարգապահություն» կուսակցություն (N 15)

Ծրագրում (էջեր 20, 23, 28-32) նախատեսվում է Սյունիքում ստեղծել հանքային հումքի վերամշակող գործարաններ և մետաղների պատրաստի արտադրանք արտադրող համալիրներ: Լոռու մարզում նախատեսվում է հանքարդյունաբերության զարգացում՝ խիստ բնապահպանական վերահսկողության պայմաններում, ինչպես նաև հանքարդյունաբերությունից ստացվող շահույթի մի մասի ուղղում համայնքների

զարգացմանը։ Ծրագրում նշվում է, որ Վայոց Ձորի սարերը, անտառները և ջրերը պետք է պաշտպանվեն, իսկ բնապահպանությունը դիտարկվում է որպես պետական անվտանգության մաս։ Նախատեսվում է նաև վերակառուցել ոռոգման համակարգերը և խմելու ջրի ցանցերը։

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն (N 16)

Ծրագրում (էջեր 16, 24-25) կարևորվում է շրջակա միջավայրի նկատմամբ հոգատար վերաբերմունքը, կենսաբազմազանության պահպանումը և կոշտ թափոնների արդյունավետ կառավարումը։ Նախատեսվում է ներդնել կոշտ թափոնների շրջանաձև կառավարման համակարգ՝ հիմնվելով եվրոպական երկրների փորձի վրա։ Ծրագրով նաև նախատեսվում է հանքարդյունաբերության ոլորտում կիրառվող ստանդարտները փուլային կերպով համապատասխանեցնել միջազգային լավագույն փորձին։ Նախատեսվում է նաև Սևանա լճից ջրառի աստիճանական կրճատում, անտառների և բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ուժեղացում, կենսաբազմազանության պաշտպանության միջոցառումների իրականացում, ինչպես նաև օդի, ջրի և ճառագայթային ֆոնի մոնիթորինգի համակարգերի զարգացում։

Ռեֆորմիստների կուսակցության կողմից հրապարակված նախընտրական ծրագիրը չի անդրադառնում բնապահպանական հարցերին։

Հետևյալ 9 կուսակցություններն ԿԸՀ չեն ներկայացրել նախընտրական ծրագիր.

- «Բոլորին դեմ եմ» ժողովրդավարական կուսակցությունը
- Հայաստանի շնորհապետական կուսակցությունը
- «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցությունը
- «Քոչարի ազգային վերածնունդ և ազգի զարթոնք» կուսակցությունը
- Քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցությունը
- «Ալյանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցությունը
- «Հայաստան» կուսակցությունների դաշինքը
- «Հանուն հանրապետության» ժողովրդավարության պաշտպանների դաշինք կուսակցությունը
- «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը